Բյուրոյի խորհրդի որոշման եզրափակիչ մասի ամփոփ նյութ

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 25.08.2020 թ. թիվ 09 արձանագրությամբ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ-ն Բյուրոյի կանոնների խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» RL 1-001 կանոնների 100-րդ կետը խախտելու համար ընկերության նկատմամբ կիրառվել է տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու և 5 աշխատանքային օրվա ընթացքում թույլ տրված խախտումը վերացնելու հանձնարարականով: